Հավելված 2
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2021 թվականի
դեկտեմբերի 22-ի ԿԽ-010/21/2 որոշման

ԾՐԱԳԻՐ
ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատախազների 2022թ. հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
3. Ծրագիրը նպատակաուղղված է դատախազների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 6 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:
6. Հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2022 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-S-001-22	Հրազենի գործադրման հմտություններ	6

1. P-S-001-22. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատախազների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքները: